

# Ը. Միութիւնը նոր Զօրքեր Կը Ղրկէ Արցախ

Ստեփանակերտի մէջ 16 Օգոստոսին արցախցիներուն համագումարը եւ անկէ ըսած Ազգային խորհուրդը ստիպողական պայմաններու տակ անուշաձ ինքնակառավարման մարմին մըն էր՝ օրինական ու գործնական ամէն իշխանութենէ զուրկ, եւ ազգամիջեան բախումներով բզբտուած Մարզին համար:

Այդ անհրաժեշտ նախաձեռնութիւնը դժգոհութիւն յառաջացուցած է ատրպէյճանցիներու մօտ, որոնք այժմ լծուած են աւելի պըղտորելու ինքնավար Մարզին առօրեան: Անոնք սպաննած են հայ հովիւ մը, իսկ Օգոստոս 28ին ազերիներ յարձակած են Պաքուի հայկական եկեղեցիին վրայ, որուն պատուհաններուն ապակիները քարկոծած են: Ատրպէյճանի մայրաքաղաքին մէջ կ'ապրէին շուրջ 150,000 հայեր, որոնց թիւը կէսի իջած է այսօր:

Այս նոր պայմաններու տակ, Երեքշաբթի, 29 Օգոստոսին, Մոսկուա նոր գործ (Շար.ը տեսնել Տրդէջ)

## Քերագոյն Խորհուրդի Երեսփոխան Կ'ընտրուին Լեւոն Տէր Պետրոսեան, Ռաֆայէլ Ղազարեան, Արքատի Մանուչարով, Ռոպէր Քոչարեան

Օգոստոս 27ին կայացած Հայաստանի Քերագոյն Խորհուրդի լրացուցիչ ընտրութիւններուն, որոնք տեղի ունեցան թափուր մնացած հինգ անդամներուն համար, երեսփոխան ընտրուած են Ղարաբաղի Կոմիտէի եւ Արցախի «Կոունկ» Կոմիտէի ղեկավարէն Լեւոն Տէր Պետրոսեան, Արկաղի Մանուչարով, եւ Ռաֆայէլ Ղազարեան: Ընտրուած է նաեւ արցախցի Ռոպէր Քոչարեան: Հինգերորդ ընտրեալին անունը դեռ յայտնի չէ:

Արքատի Մանուչարով Արցախի «Կոունկ» Կոմիտէի գլխաւոր ղեկավարն է, որ ցարդ բանտարկուած կը մնայ: Իր թեկնածութիւնը դրուած էր Հայաստանի Զարեանցաւանի շրջանի բնակչութեան կողմէ: Անոր թեկնածութիւնը առաջարկուած էր նաեւ քաղաքական այն կարեւոր նկատումով,

որ Արցախ ունենայ իր երեսփոխանը Հայաստանի Քերագոյն Խորհուրդին մէջ:

Ռ. Քոչարեան, Արցախի «Ազգային ծակատ», ընտրուած է Կիրովականի շրջանէն:

Լեւոն Տէր Պետրոսեան թեկնածու էր Երեւանի Լեւինեան շրջանէն:

Ռաֆայէլ Ղազարեան, Աշտարակի շրջան: Իր ղեկ իր թեկնածութիւնը դրած էր Վարդգէս Պետրոսեան (Գըրոզներու Միութեան նախկին նախագահ, այժմ՝ Մըշակութային Ֆոնտի նախագահ), որ ընտրութիւններէն երեք օր առաջ քաշած էր իր թեկնածութիւնը:

Հինգերորդ թեկնածուն, Արշակ Սաթոյեան, որ չէ ստացած ձայներու անհրաժեշտ մեծամասնութիւնը, անդամ է «Մահամանադրական խումբ»ին, այլ խօսքով՝

(Շար.ը տեսնել Տրդէջ)

# ԱՐՑԱԽ (Շար. առաջին էջէն)

Բեր դրկած է Արցախ:

Կործադուլը կը շարունակուի Ստեփանակերտի մէջ: Աշխատաւորներու մեծամասնութիւնը կողմնակից կը մնայ գործադուլի շարունակման նկատի առնելով որ երեւելէս ամիսներէ ի վեր, որ սկսած է գործադուլը, դեռ ոչ մէկ դրական եւ գործնական լուծում գտնուած է տագնապը յառաջացնող հարցերուն:

Հակառակ Հայ Ազգային Խորհուրդի կազմութեան եւ տարուած աշխատանքներուն, գործադուլը կը շարունակուի Ստեփանակերտի մէջ: Աշխատաւորներու մեծամասնութիւնը կողմնակից կը մնայ գործադուլի շարունակման նկատի առնելով որ երեւելէս ամիսներէ ի վեր, որ սկսած է գործադուլը, դեռ ոչ մէկ դրական եւ գործնական լուծում գտնուած է տագնապը յառաջացնող հարցերուն:

Այսուհանդերձ, Ազգային Խորհուրդը կը շարունակէ հետապնդել գործադուլներուն վերջ տալու իր որոշումը:

Մասնակիօրէն կը գործեն կենցաղային սպասարկման եւ սննդանիւթերու ձեռնարկները, փոխադրական սպասարկութիւնները եւ շինարարական ձեռնարկութիւնները:

Խ. Միութեան ներքին Գործերու նախարարութեան Մամուլի կեդրոնի ներկայացուցիչի համարակալ (Մայօր) Եւրի Մախարով «Արմէնփրէս»ի թղթակից Ս. Գրիգորեանին հարցազրուած է, որ Արցախի մէջ «իրադրութիւնը կը մնայ լարուած»: Շրջափակուած կը մնան ինքնավար Մարզի շարք մը բնակավայրեր, եւ զանոնք իրարու կապող ճամբաներուն վրայ կը շարունակուին անցնող ինքնաշարժներու վրայ ֆարկոծումները: Երկու ազգութիւններու պատկանող անձերու մօտ կը գտնուին հրազեններ եւ զինամթերք, որոնց գրաւումով զբաղած են ներքին զօրքերու ուժերը: Հանապարհներու այս սուր կացութեան կապակցութեամբ որոշուած է որ ինքնաշարժներուն ուղեկցին զինուորներ: Ասոնց ցուցմունքներ եղած են յարձակումները կանխելու ուղղութեամբ, որպէսզի անմեղ անձեր զոհ չդառնան, ոչ ալ պետական եւ անհատական ինչքերու վնաս հասցուի:

## ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

(Շար. առաջին էջին)

Հասայնավր Կուսակցու-  
թեան կամ կառավարու-  
թեան թեկնածու չէ: Սաթոյ-  
եան իր թեկնածու թիւնը  
դրած է Ստեփանաւանէն:  
Անոր հակառակորդն ալ չէ  
ընտրուած, ըստ ստացուած  
լուրերու: Հետեւաբար նոր  
ընտրութիւն մը տեղի պիտի  
ունենայ:

Թեկնածուներու կարգին  
կը գտնուէր նաեւ «Ոգնի»ի  
խմբագիր Արամայիս Սա-  
հակեան:

Մանուչարովի պարագա-  
յին, ըստ խորհրդային օրէն-  
քի, երեսփոխանական թեկ-  
նածուն եւս անձեռնմխելի է,  
եթէ այդ իրաւունքը իրմէ  
չառնէ տուեալ հանրապե-



Լեւոն Տէր-Պետրոսեան

հորդի նախագահութիւնը:  
Մանուչարովի ընտրաշրջա-  
նին գրանցուած էր նաեւ  
Ղարաբաղի Կոմիտէի ուրիշ  
մէկ անդամը՝ Համբար-  
ձում Գալստեան: